ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ 1937 ԹՎԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ավետիք Իսահակյանի «Ժողովրդի քնարը» պոեմը բացառիկ ճակատագիր է ունեցել։ Երկար ժամանակ ենթադրվում էր, որ այն գրված է եղել 1917 թ.՝ Ժնեում, այն ծանր մտորումների և տպավորությունների ազդեցության տակ, որ համակել էին բանաստեղծին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բարբարոսական կոտորածից հետո։ Ա. Ղանալանյանի բառերով ասած՝ «Ժողովրդի քնարը» (1917 թ.) լեգենդի միջոցով Իսահակյանը վրեժի ու ատելության խոսք է ասում իր հայրենիքի երդվյալ թշնամիների՝ թուրք ջարդարարների հասցեին»[1]։ Առաջին անգամ պոեմը տպագրվեց 1940 թ. «Գրական թերթի» մարտի 30-ի համարում՝ «Սերբական լեգենդա 18-րդ դարի» ենթավերնագրով։ Այնուհետև այն արտատպվեց Իսահակյանի՝ նույն թվականին լույս տեսած «Ընտիր երկերի» երկրորդ հատորում, սակայն այս անգամ «Սերբական լեգենդա 19-րդ (՞) դարի» ենթավերնագրով։ Այս երկու հրապարակումների վերջում, ինչպես նաև պոեմի հետագա հրատարակությունների ժամանակ, նշվում էր՝ «Ժընև, 1917»։ Միմիայն 1974 թ. Իսահակյանի ստեղծագործության խոշորագույն գիտակ Ա. Ինճիկյանի խմբագրությամբ լույս տեսած նոր վեցհատորյա «Ընտիր երկերում» պոեմը թվագրվեց 1937 թվականով (հ. 2, էջ 221—224)։ Ծանոթագրություններում Ա. Ինճիկյանը վկայակոչում է Գ. Սարյանի «Մեր մեծ վարպետը» հուշագրական ակնարկը։ Ահա թե ինչ է պատմում Գ. Սարյանը իր հուշերում. «Մի ժամանակ եղավ, երբ որոշ պաշտոնական անձնավորություններ իրենց մարդկանց միջոցով հորդորում էին Իսահակյանին, որ նա ներբողներ գրի։ Իսահակյանը բացարձակապես չէր մերժում, սակայն չէր էլ գրում։

— Ես ինչպես կարող եմ գրել,— ասում էր նա իր համար վստահելի մարդկանց։

Եվ այսպես անցնում էին օրերը։

Բայց ահա մի առավոտ, այդ կարծեմ 1937 թվականի գարնանն էր, Ա. Իսահակյանը եկավ մեր տուն։ Սովորական «բարև աստծու բարին»-ից հետո նա նստեց, ապա ծոցագրպանից հանեց թղթերը և ասաց.

— Մի նոր բան եմ գրել,— ասաց Իսահակյանը,— կարդամ լսիր։ Եվ նա սկսեց կարդալ իր գրածը՝ «Ժողովրդի քնարը» սերբական լեգենդը

...Երբ Իսահակյանը ավարտեց ընթերցումը, ես բացականչեցի։

— Սքանչելի բան ես գրել, վարպետ... ուղղակի սքանչելի է։

— Լավ։ Ես դրա համար չկարդացի,— ասաց վարպետը,— այս գործը ես ավարտեցի երեկ։ Բայց տակը գրել եմ «1917 թիվ, Ժնև»։ Այս գաղտնիքը ավանդ եմ թողնում քեզ։ Թե դու ինձնից հետո կլինես աշխարհում, երբ հարմար կհամարես, հայտնիր հայ ժողովրդի սերունդներին, որ Իսահակյանը այս լեգենդը գրել է ոչ թե 1917 թվին Ժնևում, այլ 1937 թվին՝ Երևանում։

Ես մինչև այսօր սրբությամբ պահել եմ Իսահակյանի այս ավանդը և

---

1 Ա. Տ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները. Երևան, 1955, էջ 42։

հիմա, երբ Իսահակյանի մահից անցել է ավելի քան տասնմեկ տարի, արդեն ժամանակն եմ համարում ասելու հայ ժողովրդի սերունդներին այն, ինչ հանձնարարել է ինձ մեծ վարպետը»[2]։

Միաժամանակ ծանոթագրությունների հեղինակը մատնանշում է պոեմի ինքնագիրը. «Գրել է, ըստ ինքնագրի տվյալների, 1937 թ. Երևանում»։ Մեզ, ցավոք, չհաջողվեց հայտնաբերել որևէ ինքնագիր այսպիսի ուղղակի թվագրումով, սակայն, ըստ երևույթին, Ինճիկյանը նկատի ուներ այն ինքնագիրը, որը պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում[3]։ Դա պոեմի մաքրագիր օրինակն է, գրված սև թանաքով՝ կանաչագանակագույն տետրակային հինգ թերթիկների վրա։ Թերթիկները համարակալված են 1-ից 6-ը, բացակայում է հինգերորդ համարի թերթիկը։ Պոեմի ենթավերնագիրն է՝ «Սերբական լեգենդա XVII (՞) դարից»։ Հետագայում XVII դարը փոխարինվեց XVIII-ի, և այդ տեսքով առաջին անգամ հրատարակվեց «Գրական թերթում»։ Միանգամից աչքի է ընկնում ինքնագրի երեսնական թվականներին գրված լինելը։ Իսահակյանը այստեղ օգտագործել է իրեն ոչ բնորոշ «նոր ուղղագրությունը» (օրինակ՝ այսոր, յերջանիկ, վոսկե, վորդի և այլն)։ Ինքնագրի վերջում տեսնում ենք Իսահակյանի ստորագրությունը և հետևյալ թվագրումը՝ «1917 Ժընև»։ Սակայն ուշադիր նայելով այս վերջին մակագրությանը՝ կարող ենք որոշակիորեն հավաստիանալ, որ այն գրված է ավելի մուգ թանաքով կամ էլ ուրիշ գրիչով, որ «Ժընև» բառը դրբված է մի ինչ-որ չնչված բառի վրայից (հավանական է կարծել, որ դա «Երևան» բառն էր), և որ 1 թիվը իր թանձր գծագրով ծածկում է մեկ ուրիշ թիվ և այնքան հաստ է, որ նույնիսկ նշմարվում է թերթիկի մյուս երեսին։ Այս ինքնագիրը ո՛չ բովանդակությամբ, ո՛չ էլ ուղղագրությամբ (բացառությամբ ենթավերնագրի) չի տարբերվում «Գրական թերթում» առաջին անգամ տպագրված պոեմի բնագրից։

Պոեմի մեկ ուրիշ ինքնագիր (որը մեզ չհաջողվեց հայտնաբերել) ներկայացված է Ա. Ղանալանյանի գրքում, որպես ներդիր։ Սակայն այն նույնպես հաստատում է պոեմի 30-ական թթ. գրված լինելը. այսպես, օրինակ, որոշ բառեր գրված են նոր ուղղագրությամբ (վրա, ծածկված, խնճոյք և տալիս)։ Ի դեպ, ժնևում գրված բանաստեղծական տետրակներից ոչ մեկում ակնարկ իսկ չկա «Ժողովրդի քնարի» վերաբերյալ։ Այսպիսով, 1937 թ. որպես պոեմի գրվելու թվական կարելի է համարել ապացուցված։

Մոտավորապես նույն ճակատագիրն ունի նաև Իսահակյանի «Գայլն ու սոխակը» առակը։ Առաջին անգամ այն տպագրվել է Ստալինի մերկացումից հետո՝ 1955 թ., իսկ այնուհետև 1958 թ. հրատարակված ժողովածուներում և մինչև օրս մտցվում է բանաստեղծի երկերի ժողովածուների մեջ՝ «1915 թ. ժնևյան թվագրությամբ։ Սակայն, ելնելով առակի երկու պահպանված ինքնագրերից, մենք հանգում ենք միանգամայն ուրիշ հետևության։ Ինքնագրերից մեկը գրված է առանձին թերթի վրա և թվագրված է «1915 թ. ժնևյան, բայց նրա ուղղագրությունը մատնում է, որ առակի գրության թվականը կասկածելի է։ Մյուս ինքնագիրը հաստատում է կասկածը, որովհետև գրված է 1931 թ. օրացույցի մաքուր էջի վրա և ունի «1938, 18 սեպտ. Երևան» թվագրությունը։ Այս տվյալները մեզ հաղորդեց Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Լուսիկ Կարապետյանը։ Ի դեպ, «Գայլն ու սոխակը» և «Ժողովրդի քնարը» ստեղծագործությունների հիմնական գաղափարները շատ են մոտ, ինչի մասին ստորև կխոսվի ավելի մանրամասնորեն։

Գրականության և արվեստի թանգարանում, նույն № 264 գործում, պահվում է նաև ծոցատետրից պոկված մի առանձին փոքր թերթիկ, որտեղ գրտնում ենք պոեմի առաջին տան սկզբնական տարբերակներից մեկը՝

---

2 Գ. Սարյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1971, էջ 141—142։

3 ԳԱԹ, Իսահակյանի Ֆոնդ, 2 բաժին, № 264։

Փայլատակում է յաթաղանը սուր
Արիւնաթաթախ Սերբիայի վրա
Ու կռնչում են անգղ և ուրուր
Դիերով ծածկված (պատած) դաշտերի վրա։

Սրա ներքևում ավելացրած է՝ «անգղ թէ անգղն»։ Անկասկած, պոեմի վերջնական խմբագրությունում «յաթաղանը կեռ» և «ագռավներն արբշիռ» զգալիորեն ուժեղացրին տողերի հնչեղությունը և պատկերավորությունը։

Մեզ հետաքրքրող մյուս բնագրագիտական հարցը պոեմի սկզբնաղբյուրի հարցն է։ Ինչպես հայտնի է, հայ բանաստեղծը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ուրիշ ժողովուրդների բանահյուսության նկատմամբ, զբաղվում էր ժողովրդական էպոսների տեսության հարցերով։ Իսահակյանը ծանոթ էր նաև սերբական էպոսին։ Այսպես, օրինակ, Թումանյանի մասին իր հուշերում (1948 թ.) Իսահակյանը պատմում է, թե ինչպես XIX դարի 90-ական թթ. «Վերնատունը» «կարդում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլինաներով, **սերբական պոեմներով** (ընդգծումը մերն է—Ա. Հ.), մեր Սասունցի Դավթով և շատ ուրիշներով»[4]։ Իսահակյանի ծոցատետրերից մեկում հանդիպում ենք հետևյալ գրառմանը. «Հոմերի Իլիականը, Ոդիսականը, Նալ և Դամայանդին, Շահ-Նամեն, Էնեականը, չեխական, **սերբական** (ընդգծումը մերն է—Ա. Հ.), ռուսական, Սիդը—այդ էպիկական գրվածքները առանց հանգերի են գրված...»[5]։ Անշուշտ, Իսահակյանը ծանոթ էր նաև սերբական էպոսից կատարված թումանյանական թարգմանություններին, որոնք առաջին անգամ տպագրվեցին 1915—16 թթ. «Հորիզոն» օրաթերթում և հետագայում բազմաթիվ վերահրատարակություններ ունեցան, ինչպես նաև Թումանյանի «Մի երկու խոսք սերբ ժողովրդական էպոսի մասին» հոդվածին։

Ինչպես նշում է Ա. Ինճիկյանը, Իսահակյանը օգտվել է տիկին Ժենինա Քլապիեի «Առասպելական Սերբիա։ Քաղվածքներ առասպելների, պոեզիայի և պատմության դանճարանից» ֆրանսերեն գրքից[6], որը լույս է տեսել Փարիզում 1918 թ. (այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ պոեմը չէր կարող գրվել 1917 թ.)։ Նույն աղբյուրն էր նշում նաև իր 1955 թ. հրատարակված հետազոտության մեջ Ա. Ղանալանյանը, սակայն նա չէր հիշատակել հեղինակին (այսինքն՝ Ժ. Քլապիեին) և փոխել էր տպագրության թվականը 1917-ի, որպեսզի այն համընկներ իր նշած ինքնագրի թվականի հետ և կասկածների տեղիք չտար[7]։

Այս գիրքը պահվում է բանաստեղծի անձնական գրադարանում C-47 գրանիշի տակ։ «Առասպելական Սերբիան» բազմատեսակ նյութերից կազմված մի ժողովածու է։ Այստեղ են մտնում սերբ ժողովրդի մասին մի պատմական ակնարկ, հոդվածներ ականավոր հասարակական և մշակութային գործիչների մասին (Սուրբ Սավվա, Դոսիթեյ Օբրադովիչ, Կարագեորգի, Միլոշ Օբրենովիչ, թագավոր Պետր), սերբական ժողովրդական էպիկական և քնարական երգերի, XIX—XX դդ. սկզբի սերբ խոշորագույն բանաստեղծներ Բ. Ռադիչեվիչի, Ջ. Յակշիչի, Յ. Սուբոտիչի, Յ. Յովանովիչ Զմայի, Ա. Շանտիչի, Վ. Իլիչի, Մ. Ռակիչի, Մ. Ճուրչինի, Մ. Վիդակովիչի, Յ. Դուչիչի բանաստեղծություններ և պոեմների թարգմանություններ, իր իսկ Ժ. Քլապիեի ձեռքով կատարված, Սերբիային և սերբերին նվիրված ձոներ։ Գիրքը լույս ընծայվեց առաջին համաշխարհային պատերազմի այն ծանրագույն փորձությունների ժամանակ,

---

4 Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1977, էջ 55։

5 Հ. Արեղյան. Իսահակյանը և ժողովրդական էպոսը. Երևան, 1975, էջ 14։

6 Mme Genina Clapier. La Serbie Légendaire. Puisé dans le trésor des légendes, de la poésie et de l'histoire. Paris, 1918.

7 Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ., էջ 43։

որոնք բաժին ընկան սերբ ժողովրդին, այն մասամբ կարելի է համարել Սերբիայի հանդեպ դաշնակից Ֆրանսիական հասարակայնության տածած խորին համակրանքի արտահայտությունը։ Պատահական չէ, որ գրքի նախաբանում հայտնի գրող և այն ժամանակ Փարիզում Սերբիայի դեսպան Միլենկո Վեսնիչը (1862—1921), դիմելով Ժ. Քլապիեին, գրում էր. «Ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ այն նրբազգաց սիրո համար, որ Դուք ներդրել եք այս աշխատության մեջ, և որը մի ավելորդ անգամ վկայում է լավագույն ապագայի նկատմամբ ունեցած մեր հավատի տոկունության և առ կատարյալ գեղեցկությունը Սերբիայի ձգտման անմահության մասին, և դա չնայած այն բոլոր փորձություններին, որոնց միջով մեր ազգին վիճակվեց անցնել երկարաձիգ դարերի ընթացքում... Մեր այսօրվա բանաստեղծությունները մենք գրում ենք մեր տատիկների արցունքներով և մեր վերջին որդիների արյունով... Գալիք լավագույն օրերին մեր գուսլարները կգովերգեն դաշնակից ազնվորների հերոսությունը... Նրանք առանձնակի քնքշությամբ իրենց հարգանքի տուրքը կմատուցեն այն Ֆրանսուհուն, որը, համաշխարհային այս փոթորկի օրերին, մի երկրորդ մայր էր դարձել մեր մանուկների համար, և երկրորդ քույր՝ մեր քաջակորով որդիների համար։ Իրենց երգերում նրանք Ձեզ երբեք չեն մոռանա»։ Իսահակյանին պատկանող գրքի բովանդակային ցանկում մատիտով ընդգծված է «Le gouslar» («Գուսլար») երգը, որը և հանդիսանում է «Ժողովրդի քնարը» պոեմի գրական սկզբնաղբյուրը։ Այն տեղ է գտել «Հերոսական երգեր» ենթաբաժնում, սակայն վերնագրի տակ նշվում է, որ այս երգը թարգմանված է «Ըստ Յովան Յովանովիչ Զմայի»։

Յովան Յովանովիչ Զմայը (1833—1904) սերբական ռոմանտիզմի խոշորագույն բանաստեղծներից մեկն է, նա մեծ հռչակ ձեռք բերեց իր հուզիչ հայրենասիրական ստեղծագործություններով, որոնց միջոցով սերբերին կոչ էր անում անհաշտ պայքարի ելնել թուրքական զավթիչների դեմ։ Նրա բարձրագույն նպատակն էր ազատ և անկախ Սերբիան, ազատ ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիներից՝ կաշառակերներից, հարմարվողականներից, դավաճաններից, բոլոր նրանցից, ովքեր ատում էին կամ արհամարհանքով էին վերաբերվում իրենց ազգային սրբություններին և ազգային մշակույթին, ովքեր ստրկաբար ընդունում էին օտարը։ Զմայի պոեզիան (հատկապես հայրենասիրականը և երգիծականը) ընթերցելիս ակամա հիշում ես Ռափայել Պատկանյանի ստեղծագործությունները. երկուսն էլ անհանգստացած են իրենց ժողովրդի ճակատագրով, պայքարի, ապստամբության նույն կոչն են անում, անողոքաբար քննադատում են սոցիալական անբարոյականության հիմքերը։ Երկու պոետները ոչ միայն ժամանակակիցներ էին, այլև ստեղծագործում էին համանման թեմաներով և սյուժեներով։ Զմայի ստեղծագործության հետ հայ ընթերցողի առաջին ծանոթությունը տեղի է ունեցել դեռևս 1892 թ. մայիսին, երբ «Արձագանք» թերթի 59—60 համարներում «Տ. Ս.»-ի (Գալուստ Տեր-Մկրտչյանի կեղծանունն է) ռուսերենից կատարած թարգմանությամբ լույս տեսավ «Վիդոսավա Բրանկովիչ» ռոմանտիկ պատմվածքը։

Բանաստեղծի լավագույն հայրենասիրական ստեղծագործություններից է 1871 թ. հրատարակված «Գուսլարի մահը» հերոսական պոեմը։ Քլապիեի ժողովածուում տեղ գտած «Գուսլար» վերնագրով ֆրանսերեն բնագիրը հենց Յ. Յովանովիչի այս ինքնուրույն ստեղծագործության թեթևակիորեն վերամշակված, արձակ թարգմանությունն է, և ոչ թե ինչ-որ սերբական լեգենդ(ա) կամ էպիկական երգ։ Սերբական էպոսն ընդհանրապես չունի նման սյուժեներ։ Զմայի պոեմը միայն մի քանի արտաքին հատկանիշներով է նմանվում ժողովրդական երգերին, ինչը, ըստ երևույթին, մոլորության մեջ է գցել Ժ. Քլապիեին, որին թվացել է, թե սերբ բանաստեղծը սոսկ ժողովրդական մոտիվ է վերամշակել։ Իր հերթին նույն մոլորության մեջ է ընկել նաև Իսահակյանը։ Իրականում՝ «Ժողովրդի քնարը» «Գուսլարի մահը» պոեմի ֆրանսերեն թարգմանության ազատ վերամշակումն է։ Այսքանից հետո զարմանալի չէ, որ Իսահակյանի պոեմը էապես տարբերվում է բնագրից, մանավանդ որ, պահպանելով բնագրի միայն հիմնական սյուժետային գիծը, հաջ

բանաստեղծը փաստորեն կերտել է միանգամայն նոր ստեղծագործություն, բոլորովին այլ նպատակներով և ուրույն գեղարվեստական հատկանիշներով։ Հետաքրքիր է, որ «Ժողովրդի քնարը» և Գուսլարի մահը» ստեղծագործությունների նմանությունը դեռևս 1968 թ. նկատել է Կ. Գրիգորյանը՝ «Հայ-սլավոնական հասարակական-գրական կապերի պատմությունից XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին» հոդվածում, որը սերբերեն թարգմանությամբ լույս տեսավ Տիտոգրադի «Ստվարանյութ» գրական հանդեսում (№ 2—3, էջ 257—265)։ Կ. Գրիգորյանին թվում էր, «որ երկու գրողները հիմնվում էին սերբական էպոսից վերցրած նույն մոտիվի վրա։ Սակայն, օգտագործելով սերբական մոտիվը, հայ բանաստեղծը առաջին հերթին նկատի ուներ սեփական հայրենիքը»։ Իմիջիայլոց, 1975 թ. Իսահակյանի «Բանաստեղծությունների և պոեմների» ռուսերեն հրատարակության ծանոթագրություններում Կ. Գրիգորյանը նորից պնդում է, որ «լեգենդի հիմքում ընկած է հին սերբական առասպել»։ Այսպիսով, մոտիվի «առասպելականաց» ծագման մասին մոլորությունը ստացավ նաև իր «գիտական» հիմնավորումը։

Ավարտելով այս հարցի լուսաբանումը, ուղում ենք նշել, որ իր պոեմը գրելիս Իսահակյանը օգտագործել է Քլապիեի ժողովածուի մեջ տեղ գտած նաև մի շարք ուրիշ նյութեր։ Այսպես, օրինակ, բնագրում չէր հիշատակվում գործողության վայրը, այնինչ Իսահակյանի մոտ դա «ճերմակ Բելգրադն» է։ Այս արտահայտությունը փոխ է առնված Սերբիայի պատմությանը վերաբերող ներածական ակնարկից, որտեղ հենց առաջին էջում խոսվում է «blanche Belgrad»-ի մասին (Բելգրադը սերբերենում նշանակում է «սպիտակ քաղաք»)։ Իսահակյանի պոեմում հիշատակվում են ուսկոկները (Թուրքերի դեմ պայքարող սերբերի ղինված խմբեր), որոնց մասին նույնպես բնագրում ոչինչ չի ասվում, սակայն գրքում զետեղված է ուսկոկներին նվիրված ժողովրդական երգերի մի ամբողջ շարք։ Մեր կարծիքով, 1918 թ. գտնվելով Ժնևում՝ Իսահակյանը ձեռք է բերել և ընթերցել Քլապիեի կազմած ժողովածուն։ Հնարավոր է, որ արդեն այն ժամանակ սերբական ժողովրդական էպոսը, հայրենասիրական քնարերգությունը և մասնավորապես Ջմայի պոեմը, գրավել են հայ բանաստեղծի ուշադրությունը, որի սյուժեն հետագայում նա օգտագործել է իր ստեղծագործության մեջ։ Սակայն միայն 1937 թ. Վարպետը վերհիշեց «Գուսլար» «լեգենդը» և արդեն բացարձակապես ուրիշ պայմաններում մարմնավորեց այն։

Երևան, 1937 թվական։ Անողոք ոստիկանական տեռոր, որը հազարավոր անմեղ կյանքեր էր հնձում։ Բանտարկում են բոլորին անխտիր, առանց հետաքննության և դատի։ Բանտերում և ճամբարներում է հայտնվում հայ մտավորականության սերուցքը, հայ մշակույթի հպարտությունը։ Մտքի մեջ իսկ հնարավոր չէր հանդիմանել «Ժողովուրդների հորը»։ «Ես ինչպես կարող եմ գրել»,—վրդովվում էր Իսահակյանը։ Ինչպե՞ս կարող է արվեստագետը ներբողներ կարդալ, երգեր կերտել ի փառս դահճի։ Եվ ահա երևան է գալիս «Ժողովրդի քնարը» (Սերբական լեգենդա XVIII դարի)՝ գրված «Ժնևում, 1917 թ.»։

Իսահակյանական մտատանջությունների ճշմարիտ պատկերի վերաստեղծումը, տեռորի անսանձելի ցնծության մթնոլորտի նկատմամբ նրա վերաբերմունքը գուցե թե հնարավոր է վերականգնել՝ համեմատելով «Ժողովրդի քնարը» և «Գուսլարի մահը» ստեղծագործության ֆրանսերեն թարգմանությունը։ Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ֆրանսերեն թարգմանությունը սերբերեն բնագրի բառացի փոխադրությունը չէ։ Ժ. Քլապիեն իր ժողովածուի նախաբանում ընդգծում էր հետևյալը. «Ներեցեք, ինձ հարցնում եք, թե ինչո՞ւ եմ ես գրի առել ձեր առասպելները։ Կասեմ, որպեսզի նրանք մոռացության գիրկը չանցնեն։ Մինչև այժմ բնագրին հարազատ ու բարեխղճորեն թարգմանված լինելով՝ դրանց մեծամասնությունը շատերի համար անհասկանալի է մնացել, և կարծես դարերի փոշուց պեղված լինի։ Դրանք ես մաքրել եմ իմ հոգածու ձեռքերով, որպեսզի կարելի լիներ նրանց համբուրել... Ես նրանցից հեռացրել եմ ծանրացնող խարամաշերտը, որպեսզի մեր երեխաների

հայաբնակ չպղտորվի։ Որպեսզի այս առասպելները սիրվեն և հասկացվեն մեր դարաշրջանում՝ հարկավոր էր նրանց «կենդանի ձև» տալ։ Իսահակյանը առավելագույնս սեղմում է տողերը, հրաժարվում երկարաբանություններից և ավելորդ նկարագրություններից։ Նրա բանաստողերը առավել չափով հակիրճ են և միաժամանակ գերհագեցված։ Արդեն առաջին իսկ տան մեջ Իսահակյանը կերտում է ավերված Սերբիայի մի շատ համոզիչ և տպավորիչ պատկերը.

Փայլատակում է յաթաղանը կեռ
Արյունաթաթախ Սերբիայի վրա,
Եվ կոնչում են ագռավներն արբշիռ՝
Դիերով ծածկված դաշտերի վրա

Համմտ. Ջմայլի պոեմում.

Արևմուտքում արևն ընկել էր ալ կարմիր քարաժայռերի վրա։ Նա փշրվեց հազարավոր թանկարժեք քարաբեկորների։

Աստղերը փայլում են, անթիվ-անհամար, ինչպես մարտիրոսված ժողովրդի արցունքները։

Իսահակյանի պոեմում չկան և չէին էլ կարող լինել արևն ու աստղերը։ Մեր առջև է հայ բանաստեղծի բազմաշարշար, արյան մեջ ընկղմված հայրենիքի մռայլ պատկերը, դիերով ծածկված դաշտերը, որոնց վերևում պտույտներ են գործում և կռնչում արբշիռ ագռավները։ Եվ այդ ամենի վրա ոչ թե աստղերն են փայլատակում, այլ անխիղճ դահճի կեռ յաթաղանը, որը դաժանորեն հնձում է անմեղ զոհերին։ Դուրս մխայն «արյունաթաթախ» բառն է հիշեցնում բնագրի «ալ կարմիր քարաժայռերը»։

Արդեն հաջորդ տան մեջ երևան է գալիս արյունարբու Աբդուլլահ փաշան (Ջմայլի պոեմում դա Թոփալ փաշան է)։ Այս կերպարի կերտման առումով Իսահակյանի պոեմը լիովին տարբերվում է բնագրից։ Իսահակյանը սրում է մթնոլորտը, մեկը մյուսի հետևից շարում մերկացուցիչ մակդիրներ, շռայլորեն օգտվում է արտահայտչական բազմապիսի միջոցներից։ «Աբդուլլահ փաշան, ահեղ բռնակալը, Սերբիայի դահիճը» ցնծության, հրճվանքի մեջ է՝ «իր կազմած վայրագ ջարդերի համար» (հիշեցնենք, որ սա գրված էր 1937 թ.)։ Բազմելով իր «սադաֆե թախտին», իր «պերճ ապարանքում», նա «խնջույք է տալիս, փարթամ կերուխում... ոսկե գավաթով շերբեթ է խմում»։ Սակայն նրան քիչ է թվում հենց նոր թափած արյունը, նա երազում տեսնում է, «թե ուսկոկների արյունն է խմում»։ Իր կատարած ահեղ հանցագործությունները վայելող բռնակալի պատկերը, որ ամփոփված է այս տասներկու տողերի մեջ, սպանիչ բնութագիրն է «Ժողովրդի հոր», որը մասսայական ռեպրեսիաներից, հալածանքից, կոտորածներից, բռնականացված դատավարություններից հետո, անմեղ թափած արյան ծովերի հարևանությամբ հանգիստ խղճով վայելում էր իր ծխամորճը և մեծաշուք խնջույքներ կազմակերպում։

Պատկերը թերի կլիներ, եթե Իսահակյանը մեզ չներկայացներ նաև բռնակալի ստոր կամքի գարշելի կատարողներին, XX դարի այս ենիչերիներին, մարդկային ամենապարզ զգացմունքներից զուրկ, «մռայլ ու դաժան» գազաններին, որոնք «հոհոռում են դիվական խինդով», հաշվելով իրենց սուր յաթաղաններով թոցրած գլուխները։ Բնագրում չկան այս անզուսպ և անամոթ շվայտանքի նկարագրությունները (այն միմիայն ակնարկվում է), Թոփալ փաշան ընկղմվել է ծանր մտածմունքների մեջ, թե «չկա աստված, չկա արդարություն», փաշայի անհամար հարստությունները և յաթաղանով թափած արյունը միմիայն խորացնում են նրա հոգու դատարկությունը։ Արյունը նրա մեջ զզվանք է առաջացնում, թվում է, թե նա արդեն պատրաստ էր վերջ տալու բռնություններին, եթե ժողովրդական երգերում փառաբանվեին նրա «սխրագործությունները»։ Իսահակյանի «հերոսին» խորթ են այսօրինակ մտածմունքները, նա արյուն է տենչում, որը պետք է հոսի Դունայի նման, և հենց այս բանի համար նրան պարտավոր են փառավորելու պալատական

ներքողագիրները, նկարիչները, ամեն տեսակի ձրիակերները։ Թոփալ փաշան փառքի է ձգտում, և այդ պատճառով նա արյուն է թափում, Իսահակյանի Արդուլլահ փաշան թափում է արյունը և պահանջում, որպեսզի նրան փառաբանեն այդ հանցանքի համար։

Գործողությունների հետագա ընթացքը Իսահակյանի պոեմում հիմնականում համընկնում է բնագրի հետ։ Փաշայի հրամանով ներս են բերում կույր գուսլար Միրկոյին, որի չորս որդիները տանջվում են բանտում («Գուսլարի մահը» պոեմի մեջ, Միրկոյի որդիներին վաղօրոք սպանել էին, սակայն թաքցընում էին այդ բանը գուսլարից)։ Միրկոն Աբդուլլահ փաշայի կատարյալ հակապատկերն է։ Իսահակյանը դիպուկ և ցայտուն գծերով ներկայացնում է ծերունու վեհ ու տխուր կերպարը, որը, կարծես, մարմնավորում է ստրկացած, սակայն միշտ անհնազանդ և պայքարը շարունակող Սերբիան։ Ինչպիսի՜ վեհություն կա այս կերպարի մեջ։ «Ոտների տակ Սերբիան ճզմողը» փաշան զայրույթից կորցրել է իրեն։ Բայց «լուռ է Միրկոն՝ գուսլեն ուսից կախ»։ Խենթացած փաշայի հիստերիկ ճիչերը և ծերունի երգչի լուռ ու հանգիստ պահվածքը, նրանց միջև տեղի ունեցող երկխոսությունը, ուր մեկը անիծում է ու հայհոյում, իսկ մյուսը՝ արհամարհանքով պատասխանում սպառնալիքներին, արդյո՞ք այս ամենը չի հիշեցնում կամ, ավելի ճիշտ, հստակորեն չի արտացոլում այն իրավիճակը, որը ստեղծվել էր մեր մշակութային կյանքում 1930-ական թթ.։ Իսահակյանը ավելի խորն է ներթափանցում իր հերոսի հոգևոր աշխարհը, նա հասկանում է, որ բանտարկված որդիներին ազատելու խոստումը պետք է տատանումներ առաջացնի գուսլարի սրտում, որ իր տեսիլքներում նա կտեսնի, թե ինչպես «որդիներն ուրախ տուն են դառնում ողջ, ազատ, միատեղ», որ իր սիրասուն զավակների պատճառով կրած երկյուղը կստիպի նրան «շարժել լարերը», «հյուսել փառքի դաստանը»։ Քանիսնե՜րը չդիմացան այդպիսի փորձություններին, ընկճվեցին, մոռացան ճշմարիտ խոսքը և սկսեցին ներքողներ ու երգեր հյուսել ի փառս «ժողովուրդների հոր»։ Կար մի ժամանակ, երբ այդպիսի մի փորձության չդիմացավ նաև ինքը՝ Իսահակյանը։ Սա այն վճռական պահն է, որը սահմանազատում է Ջարն ու Բարին, Սուտն ու Ճշմարիտը, Ոչնչությունն ու Վեհությունը, Մահն ու Հավերժությունը։ Ո՛չ, չի՛ կարող ժողովրդի քնարը բռնակալներին գովերգել, իսկական բանաստեղծը չի կարող ստոր արատներին ծառայել և արյունոտ հանցանքները սքողել։ Ավելի լավ է չերգես, չգրես, չնվագես, չնկարես, ավելի լավ է կուրանաս, խլանաս, մատներդ կտրես... Սակայն բռնակալին, հակամարդկային հասարակարգին բացահայտ մարտահրավեր նետելը կարող է միմիայն հերոսը, միմիայն մարտիրոսը, որը գիտակցորեն Golgotha է բարձրանում հանուն ուրիշների փրկության, հանուն Հավատքի, Հույսի և Սիրո։ Նվ սա է լինելության հաղթանակը, սա է լինելու տաճար տանող միակ ճանապարհը։

Կույր երգչի կերպարանքը աճում է հսկայական չափերով, կարծես թե բոլոր բազմաչարչար ժողովուրդների զայրույթը մարմնավորվում է նրա արտասանած վերջին խոսքերում.

«Մարդասպա՜ն, ուրացո՜ղ, անիծված դավաճան, քո ազգի ոխերիմ թշնամի, այդ ամենը դու ես։ Արյունախում դև, փշրի՜ր իմ հույսը, հնձի՜ր իմ երջանկությունը, բայց իմացի՜ր, որ սերը ժողովրդի սրբազան գուսլեն երբեք չի կարող ստել...»։

Այս տողերը Իսահակյանին պատկանող գրքում ընդգծված են սև մատիտով։ Բնորոշ է, որ մինչ այժմ բնագրի հետ ազատորեն վարվող Վարպետը, այս խոսքերը թարգմանում է գրեթե բառացիորեն.

— Ո՛վ սրիկաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՜ք, լափե՜ք ավել, առավել,
Սակայն իմացե՜ք
Որ ժողովրդի քնարը երբեք
Չի կարող ստել...

«Գայլն ու սոխակը» առակում սոխակը, բախտի քմահաճույքով հայտնված գայլի ճանկերում, դիմում է սրան նույնանման խոսքերով.

— Այո, ճիշտ է, սոխակն ասաց,
Վարպետ եմ ես հուշակավոր,
Բայց միայն թե՝
Մայր բնության ազատ գրկում,
Եվ ոչ դաժան քո ճանկերում,
Ո՛վ գազան։

Հատկանշական է, որ Զմայլի պոեմի վերջում ահեղ Թոփալ փաշան, գուսլար Միրկոյի հերոսական մահից ցնցված, անսպասելիորեն խաչակնքում է երեսը (Սերբիայում իշխող օսմանյան վերնախավը ոչ թե օսմանյան թուրքերն էին, այլ թրքացած, մահմեդականացած սլավոններ), ծունկի է իջնում ծերունու առաջ, և, «վերցնելով սրբազան գուսլեն՝ նրանից ներողություն խընդրելու համար, իր շրթունքներն է սեղմում նրան»։ Գյավուրի առաջ խղճահարվելու համար նրա ենիչերիներից մեկը կտրում է Թոփալ փաշայի գլուխը։

Իսահակյանը չէր հավատում (և միանգամայն իրավացի էր), որ խղճմտանքի նման արտահայտությունները հնարավոր են շատ ավելի խոշոր թափի բռնակալի հոգում, այն բռնակալի, որն իր երկիրը վերածեց համակենտրոնացման ճամբարի և մի հսկայաչափ եղբայրական գերեզմանոցի, մի դահճի, որը զրկված էր մարդկային ամենատարրական զգացմունքներից իր իսկ ամենամերձավոր մարդկանց, իր հարազատ ժողովրդի նկատմամբ։ Ըստ երևույթին, Իսահակյանը չէր հավատում նաև, թե մշակույթի գործիչներին վիճակված է հաղթող դուրս գալ անհավասար մենամարտում։ Եվ այնուամենայնիվ, նա հրապարակեց իր «Ժողովրդի քնարը»։ Ո՞վ գիտե, գուցե և որևէ մեկը այն ժամանակ պոեմը «Գրական թերթում» կարդալով միտք արեց նրանում պատկերված իրողությունների և սեփական անմխիթար վիճակի արտակարգ նմանության շուրջը։ Սակայն պոեմի վերջում գրված էր՝ «Ժընև, 1917 թ.», իսկ դա արդեն կասկածի տեղիք չէր տալիս Վարպետի «անձի» «անվստահելիության» մեջ...

Ի վերջո, ուզում ենք հայ ընթերցողներին առաջին անգամ ներկայացնել Յովան Յովանովիչ Զմայի «Գուսլարի մահը» պոեմի հայերեն թարգմանությունը։

ՅՈՎԱՆ ՅՈՎԱՆՈՎԻՉ ԶՄԱՅ

Գուսլարի մահը

I

Ւորը արևմուտքում շեկ արևն ընկավ
Կատարին հսկա քարաժայռերի,
Ընկավ, փշրվեց, բաժանվեց մի պահ
Մանր ու թանկարժեք դարդաքարերի։

Փայլատակում են երկնքում հեռի
Աստղաբույլերը անթիվ-անհամար,
Ինչպես արցունքը թշվառ սերբերի՝
Երկրի երեսին այս ցուրտ ու խավար։

Եվ ո՞ւմ համար է այսքան տառապել
Ու արցունք թափել սերբորդին թշվառ.
Թոփալ Փաշայի, որ ընկողմանել
Ու չի կարենում քուն մտնել վստահ։

Ցատկում է քնից, ճակատը շփում,
Ով կուրծքն է ուռչում ահեղ զայրույթից.
«Ջկա ո՛չ Աստված, ո՛չ ճշմարտություն,
Մարդիկ էլ մարդ լեն, տգետ են ու բիրտ»։

«Ես շաղ տվեցի գետերը արյան
Այս հար նղովյալ ռայայի ցեղի,
Ջորսդին սփռեցի ողբ ու հառաչանք,
Դառն արտասուք, սոսկանք ու լեղի։

Ուր էլ ոտք դնեմ՝ երկիրն է ցնցվում,
Սատկում է ռայան խղճուկ ու քոսոտ
Ով իմ աշխետ ձին ջուրը չի խմում,
Օքն արյունոտ չէ այն ու բոսոր։

Հրե՛ն գանձերիս պաշարներն անքիվ,
Անբավ բարիքը այնտեղ կուտակված,
Հարեմս լիքն է կանանցով ընտիր,
Բայց ձևոք եմ քաշել նրանցից անդարձ

Նողկանք եմ զգում, գարշանք ու ամոթ,
Դատարկ է կուրծքս ու սիրտս վհատ,
Փառավոր անուն, հռչակի նարոտ՝
Սա է Թոփալիս տենչը հուսահատ։

Ա՜խ դուսլե, գուսլե։ Թշվառ ռայաներ,
Հայդուկներ հտպիտ, մեղկ ու անիծված։
Ինչո՞ւ, դե ինչո՞ւ պիտի մեծարեն
Ձեր անունը, ո՜վ գարշելի վիժվածք։

Ա՜խ, ինչպե՜ս կուզեր Թոփալը լսել
Երգը, որ ուժ է տալիս ձեր բազկին,
Մեծազոր փաշան, Թոփալն անվեհեր
Ջունի մի երգիչ արժան իր փառքին։

Ատում եմ գանձը և փայլը ոսկու,
Այդ ամենը թող ճորտերը սիրեն,
Թոփալ փաշային երգն է գրավում,
Երգը, որ պիտի հռչակի իրեն։

Ի՞նչ է, այդ ռայան միայն սատակե՞լ
Գիտե իմ սրից, և ուրիշ ոչի՞նչ։
Ի՞նչ է, ճորտերն այդ չե՞ն ուզում ապրել.
Ինձնս մեծարող չկա՞ մի երգիչ։

Այդպես կատաղում, փնչում է փաշան,
Ալեկոծվում է կրքերից սաստիկ...
«Հավաքվե՛ք, Թուրքե՛ր, հաղուրալլա՜հ»
Նշույք պատրաստեք, քեֆ ու հարսանիք...»։

Դե՛հ, ինձ մոտ բերեք ծերուկ Միրկոյին,
Ի՞նչ է, դեռ չկա՞, այստեղ չէ՞ միթե։
Շուտ մոտս բերեք այն ծեր գուսլարին,
Դ՜ նրա երգը ինձ շատ է դյութել։

Թո՜ղ ինձ գովերգի ու փառավորի,
Փառքը թովչանք է հմայիչ ու պերճ...
Ա՜խ, հա՜, ես երեկ գլխատել տվի
Նրա բոլոր չորս որդիներին խեղճ։

II

Կուլը երգիչն, ահա, բռնել է գուալեն,
Սեղմել է կրծքին՝ ցավից քարացած,
Թուրքերը երգում, գոռգոռում են դևո,
Հայհոյում իրար լկտի ու անսանձ։

Խմում են, հարբում։ Տխուր է փաշան,
Չի կարողանում գավաթը պարպել,
Ուզում է քայլել, բայց ոտքերն անշարժ
Կատաղությունից դողում են արդեն։

Կուլը երգիչն, ահա, բռնել է գուալեն,
Աղի արցունքով ողողում է այն,
Ճերմակ մազերը թափվել են ներքև,
Կախ ընկել նրա դեմքից խուռներամ։

«Դե՛, երգի՛ր, վիժվածք... —Չէ՛, չէ՛, ո՛չ այդպես։
Հանդրում եմ, երգիր, սիրելի ծերուկ։
— Նա ով գուալեի գաղտնիքը գիտե՝
Նրա ձեռքին է զորություն և ուժ։

— Ինչե՞ր եմ ասում, անիծված գլավուր...
Որտեղի՞ց նրան այդքան ուժ, կորով։
— Ո՛չ, ո՛չ, մի՛ լսիր, դու երգի՛ր, ծերուկ,
Երգիր ինչ կուզես՝ արյուն քե գորով։

Երգի՛ր Թուխալի սխրանքներն անլուր,
Եվ փառավորիր անունը նրա։
Քաղցրացրո՛ւ նրա կյանքը դառնաբույր,
Մոռացման թույնից փրկի՛ր դու նրան։

Եթե գոհանամ ես քո նվագից,
Եթե կարենաս փառքս տարփողել,
Ապա կազատեմ քո որդիներին
Սևումուք բանտի խավարից հողե։

«Կազատե՞սչ, —գոռաց գերի ծերունին։
«Օ՜ այո, ես դա խոստանում եմ քեզ,
Ինչ ուզես կտամ, արծաթ քե ոսկի,
Անհամար գանձեր կնվիրեմ քեզ։

Գուալարը մի պահ գունատվում է լուռ.
—Օ՜, այս ի՜նչ ցավ է, Տեր իմ, ինձ փրկիր։
Վերցնում է գուալեն, աղեղը պրկում,
Բայց ձեռքը նրա դողում է կրկին։

«Երգի՛ր, ո՜վ ծերուկ, նվագի՛ր, դե շուտ,
Դե փառավորի՛ր անունս, դե ուես։
Էլ ի՞նչ ես կանգնել, ի՞նչ ես սպասում,
Եթե համառես՝ վայն եկել է քեզ։

Դե երգի՛ր, քե չէ, լորս որդիներիդ
Կհնձեմ գույգ-գույգ ուշաններիդ պես,
Երջանկությունդ և հույսեր քո սին
Կրունկներիս տակ կտրորեմ ես»։

Ցնցվեց ծերունի կուլրը սարսափից,
Ուզեց նվագել, գործիքը ուզեց,
Բայց առաջին իսկ հնչյունի զարկից
Կուրծքը սեղմվեց՝ ասենյալի ու խեզդ։

Արցունքը կաթ, կաթ թրչում է գուսլեն,
Ծերուկ գուսլարը կանգնել է մոլոր,
Հանկարծ իր գուսլեն գետնովը տվեց,
Եզվեցին նրա լարերը բոլոր...

«Ո՛վ դու սարդասպան, թուրքացա՛ծ ոհիճ.
Անիծված ծնունդ, ստոր ազգադավ,
Երգվյալ թշնամի սեփական ցեղիդ,
Ո՛վ դու արյունոռւշա, լարկամ սատանա։

Դե՛ ջարդիր, փշրի՛ր երջանկությունն իմ,
Հնձի՛ր, ցրի՛վ աուր հույսերն իմ մեկ-մեկ,
Սակայն, իմացի՛ր, որ գուսլեն այս սուրբ,
Սերբական գուսլեն ստել չգիտեր։

Այս ասաց պրծավ ու էլ չդորեց՝
Ուժասպառ եղավ, թալկացավ մարմնով,
Մահացած ընկավ գուսլեի կողքին,
Սև հողի վրա՝ սուրբ ու արնածոր։

Սթափվեց փայլան։ Նրա երեսից
Ցնդեցին-անցան ամպերը մռայլ։
Աչր մոաեցրեց իր նեղ ճակատին
Եվ խաչակնքվեց առաջվա նման։

Ջոքեց մահացած ծերունու առջև,
Համբուրեց գուսլեն նորից ու նորից,
Թուրքերից մեկը սուրը մերկացրեց՝
Բաժանեց նրա գլուխը մարմնից։

Սերբերենից թարգմանեցին՝ Աշոտ Հովակիմյանը և Աշոտ Ալեքսանյանը։

ПО СЛЕДАМ ПРОИЗВЕДЕНИЙ АВЕТИКА ИСААКЯНА, НАПИСАННЫХ В 1937 ГОДУ

А. А. ОВАКИМЯН

Резюме

Необычна судьба поэмы Аветика Исаакяна «Народная лира». В течение долгого времени считалось, что она была написана в 1917 г. В дальнейшем, благодаря усилиям Гегама Сарьяна и Арама Инджикяна, была установлена точная дата ее создания —1937 г. После этого стало ясно, что это не обработка сербской народной легенды, а изложение на армянском французского перевода произведения знаменитого сербского поэта Йована Йовановича Змая «Смерть гусляра» (1871 г.). Поэма Исаакяна существенно отличается от оригинала. По сути, автор создал новое произведение, сохранив лишь основную сюжетную линию источника. «Народная лира» —это гневный протест против злодеяний «отца народов». Исаакян, не имея возможности датировать ее 1937 годом, поставил в конце поэмы: «1917 г., Женева».